ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՆՑԱՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

06.05.2022 18:24

2022 թվականի մայիսի 5-ին, ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի ունենցավ քննարկում՝ «**Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատաիրավական պրակտիկայի վերջին զարգացումները**» թեմայով:

Քննարկումը վարեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներ ***Արմեն Հարությունյանը* և *Թիմ Էյքը*:**

Փաստաբանների հարցերը դատավորներին՝ մասնավորապես ՄԻԵԴ դիմելու ժամկետների և տեխնիկական մի շարք խնդիրների վերաբերյալ էին:

Դատավորները փաստաբանների հարցերին տվեցին սպառիչ պատասխաններ, որոշ հարցերի վերաբերյալ էլ, մանրամասն քննարկում իրականացնելու նպատակով, առաջարկեցին թեկուզ օնլայն ձևաչափով առաջիկայում ևս կազմակերպել քննարկում՝ ինտեգրելով նաև ՄԻԵԴ-ի այլ ներկայացուցիչների:

Փաստաբանները շնորհակալություն հայտնեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներին՝ արդյունավետ քննարկում անցկացնելու համար:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })